Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 639-Ա որոշման

«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային կազմակերպության, ինչպես նաև իր անդամ ընկերակցություն հանդիսացող «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար ռազմավարական նշանակություն ունի երիտասարդների հզորացումը: Ուստի կազմակերպությունն իրականացնում է ծրագիր՝ նպատակ ունենալով բարելավել ՀՀ Շիրակի և Տավուշի մարզերում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 400 երիտասարդի (17-35 տարեկան) սոցիալ-տնտեսական վիճակը՝ զբաղունակության և ձեռներեցության ներուժի, պետական և ոչ պետական կառույցների կարողությունների զարգացման միջոցով: Այս ծրագիրն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների մասին օրենքներով նախատեսվող արտոնություններից:
3.	Բարեգործը	Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարությունը (հասցե՝ Գերմանիա, 10963 Բեռլին, Շտրեսեմանշտրասե 94) և Հերման Գմայների հիմնադրամը Գերմանիայում (հասցե՝ Գերմանիա, 80339 Մյունխեն, Ռիդլերշտրասե 55)
4.	Ծրագրի կատարողը	«ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը (ՀՎՀՀ՝ 03517269, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հրաչյա Քոչարի 8 բնակարան 18-19)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Շիրակի և Տավուշի մարզեր, բնագավառը՝ սոցիալական

6.	Ծրագրի բյուջեն	227,853,762 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Շիրակի և Տավուշի մարզերում բնակվող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված շուրջ 400 երիտասարդ (17-35 տարեկան)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Ծրագրի մասնակիցների, պետական կրթական և սոցիալական համակարգի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար հանդիպումների և դասընթացների կազմակերպում, ինչպես նաև Աշխատանքային խմբի հանդիպումների կազմակերպում դպրոցներում «Կյանքի հմտություններ և զբաղունակություն» առարկայի ներդրման փորձնական դասընթացների արդյունքների քննարկման, ամփոփման և առաջարկությունների փաթեթի մշակման նպատակով: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 49,237,991 դրամի չափով: 2) Դասընթացների կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի տպագրություն: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 1,608,540 դրամի չափով: 3) Աշխատանքային գործիքների (վարսահարդարման, մատնահարդարման, դիմահարդարման, ոտնահարդարման գործիքներ, կտորեղեն և կարի այլ գործիքներ, կարի մեքենաներ, թխվածք պատրաստելու վառարան, համակարգիչներ և այլն) տրամադրում ծրագրի մասնակիցներին: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 17,628,823 դրամի չափով: 4) Փորձնակության կազմակերպում տարբեր կազմակերպություններում: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 3,314,368 դրամի չափով: 5) Ծրագրի իրականացման համար նախատեսված գրասենյակային տարածքի վերանորոգման, գրասենյակային գույքի (աթոռներ, սեղաններ, պահարաններ), սարքավորումների (համակարգիչներ, տպիչներ, օդորակիչներ, պրոյեկտորներ, թվային ֆոտոխցիկներ) և համակարգչային ծրագրերի ձեռքբերման ծախսեր: Նախատեսվում

		է իրականացնել 2024 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 27,023,472 դրամի չափով: 6) Ծրագրի մասնագիտական անձնակազմի՝ Կյանքի հմտությունների և զբաղունակության 2 մասնագետի, 2 երիտասարդական աշխատողի (անձնական խորհրդատու) և 1 ծրագրի համակարգողի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 81,377,783 դրամի չափով: 7) Ծրագրի իրականացումն ապահովելու համար տրանսպորտային ծախսեր: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 2,400,407 դրամի չափով: 8) Ծրագրի կազմակերպական ծախսերը՝ ծրագրի համակարգման և մոնիթորինգի, ծրագրի տեսանելիության ապահովման (թռուցիկների, պաստառների և նմանատիպ այլ նյութերի տպագրություն), ծրագրում աշխատող անձնակազմի հավաքագրման (աշխատանքի հայտարարության տեղադրում, տպագրության ծախսեր), գրասենյակային պարագաների, տնտեսական նյութերի, կապի և հեռահաղորդակցության ծախսեր, կենտրոնների մաքրման ծառայության, աշխատակիցներին հոգեբանական աջակցության, աշխատակազմի ծախսեր (ծրագրի ֆինանսական և ադմինիստրատիվ մասնագետի աշխատավարձ և ապահովագրություն), ծրագրի փակման/բացման նպատակով կազմակերպվող միջոցառումների համար տարածքի/դահլիճի վարձակալության և հյուրասիրության կազմակերպման, ծրագրի առաջընթացը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող իրագործելիության (որքանով է ծրագիրն իրագործելի և կարիքահեն) և վերջնական գնահատման (հավաստիանալու, որ ծրագիրն իրագործել է իր առջև դրված նպատակները), ինչպես նաև աուդիտորական ծառայությունների ծախսեր: Նախատեսվում է 2024 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 45,262,378 դրամի չափով:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Իրականացվող դասընթացների, ծրագրային հանդիպումների ընթացքում հյուրասիրությունների կազմակերպման ծառայությունների և անհրաժեշտ պարագաների (սուրճ, թեյ, միրգ, խմորեղեն, հյութեր, շշալցված ջուր) ձեռքբերում, աշխատանքային նյութերի և տպագրական ծառայությունների ձեռքբերում՝ 50,046,912 դրամի չափով: 2) Ծրագրի մասնակիցների համար աշխատանքային գործիքների (վարսահարդարման, մատնահարդարման, դիմահարդարման, ոտնահարդարման գործիքներ, կտորեղեն և կարի այլ գործիքներ, կարի մեքենաներ, թխվածք պատրաստելու վառարան, համակարգիչներ և այլն) ձեռքբերում՝ 17,628,823 դրամի չափով: 3) Ծրագրի իրականացման համար նախատեսված գրասենյակային տարածքի վերանորոգման, գրասենյակային գույքի (աթոռներ, սեղաններ, պահարաններ), սարքավորումների (համակարգիչներ, տպիչներ, օդորակիչներ, պրոյեկտորներ, թվային ֆոտոխցիկներ) և համակարգչային ծրագրերի ձեռքբերման ծախսեր՝ 25,504,080 դրամի չափով: 4) Ծրագրի իրականացումն ապահովելու համար տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում՝ 2,400,407 դրամի չափով: 5) Ծրագրի տեսանելիության ապահովման նպատակով (թռուցիկների, պաստառների և նմանատիպ այլ նյութերի) տպագրական ծառայությունների և նյութերի ձեռքբերում՝ 1,938,000 դրամի չափով: 6) Գրասենյակային պարագաների, տնտեսական նյութերի, Կապի և հեռահաղորդակցության ծառայությունների, կենտրոնների մաքրման ծառայության ձեռքբերում՝ 7,101,995 դրամի չափով: 7) Ծրագրի փակման/բացման նպատակով կազմակերպվող միջոցառումների համար տարածքի/դահլիճի վարձակալություն և հյուրասիրության կազմակերպում՝ 1,157,374 դրամի չափով: 8) Ծրագրի առաջընթացը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող իրագործելիության (որքանով է ծրագիրն իրագործելի և կարիքահեն) և վերջնական

		գնահատման (հավաստիանալու, որ ծրագիրն իրագործել է իր առջև դրված նպատակ-ները)՝ ծառայությունների ձեռքբերում՝ 6,395,400 դրամի չափով: 9) Աուդիտորական ծառայություններ՝ 10,465,200 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) Ծրագրի տեսանելիության ապահովման նպատակով (թռուցիկների, պաստառների և նմանատիպ այլ նյութերի) տպագրական ծառայությունների և նյութերի ձեռքբերում՝ 1,938,000 դրամի չափով: 2) Ծրագրում աշխատող անձնակազմի հավաքագրման ծախսեր (աշխատանքի հայտարարության տեղադրում, տպագրության ծախսեր)՝ 232,560 դրամի չափով: 3) Գրասենյակային պարագաների, տնտեսական նյութերի, Կապի և հեռահաղոր-դակցության ծառայությունների, կենտրոնների մաքրման ծառայության ձեռքբերում՝ 7,101,995 դրամի չափով: 4) Հոգեբանական աջակցություն աշխատակիցներին (սուպերվիզիա)՝ 658,920 դրամի չափով: 5) Աշխատակազմի ծախսեր (ծրագրի ֆինանսական և ադմինիստրատիվ մասնագետի աշխատավարձ և ապահովագրություն)՝ 16,513,310 դրամի չափով: 6) Ծրագրի փակման/բացման նպատակով կազմակերպվող միջոցառումների համար տարածքի/դահլիճի վարձակալություն և հյուրասիրության կազմակերպում՝ 1,157,374 դրամի չափով: 7) Ծրագրի առաջընթացը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող իրագործելիության (որքանով է ծրագիրն իրագործելի և կարիքահեն) և վերջնական գնահատում (հավաստիանալու, որ ծրագիրն իրագործել է իր առջև դրված նպատակ-ները)՝ 6,395,400 դրամի չափով: 8) Աուդիտորական ծառայություններ՝ 10,465,200 դրամի չափով: 9) Ծրագրի համակարգման և մոնիթորինգի ծախսեր՝ 799,619 դրամի չափով:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, աշխատանքի և սոցիալական հարցերի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, ինչպես նաև Տավուշի մարզպետի աշխատակազմի, Շիրակի մարզպետի աշխատակազմի, տեղական ինքնակառավարման մարմինների և Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

13.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ